որ ձեռագրի երկու մասերն իրար են կցուած վերոյիշեալ թուականին, իսկ Գանձերը գրուած են աւելի վաղ։ Գանձերը չնչին բացառութեամբ՝ «Խաչատուր» Acrostic-ն ունին, մի հեղինակի գործերի ժողովածու։ Գանձերի թիւը 44 պիտի լինէր, բայց սկզբից եօթը պակաս է, եօթերորդի վերջին երեք տներն են միայն մնացած, 37-ից տասը ուրիշ հեղինակների, այն էլ ԺԳ., ԺԲ. դարերի, եւ աւելի հին ժամանակների, մնացածը «Խաչատուր»ի։

Այս վերջին խմբի գանձերից մէկը՝ ԽԳ.ը ընդհանուր թուի, 108բ ունի այսպիսի վերնագիր. «Գանձ սրբոց առաքելոցն Թադէոսի եւ Բարդողիմէի, Յուդայի Յակոբեան եւ Շմաւոնի նախանձայոյզ. Ասացեալ ի խնդրս հեղի եւ քաջ գրչապետի վդ. Պաւղոսի ի նահանգէն Կիւլիկեայ». սկս. «Խորհուրդ հայրաշարժ, անշարժ շարժողիդ...»։ Այստեղ յատուկ չնշուած է խնդրողի «ի նահանգէն Կիւլիկեայ» լինելու հանգամանքը, որ ապացոյց է, թէ ոչ հեղինակը և ոչ խնդրողը Կիլիկիայում չեն. ուրիշ աղբիւրներից էլ յայտնի է մեզ շնորհալի գրիչ և մանրանկարիչ Պողոս վարդապետի անձնաւորութիւնը, տեղն ու ժամանակը. նա Գլաձորի դպրոցի գրիչ է, Նչեցու աշակերտներից, ծագմամբ Կիլիկիայի Ակներ վանքից ՁԿԲ եւ ՁԿԴ թուականներին գրել է երկու նկարազարդ աւետարան, կիլիկեան սճով, վերջինը Ջալալ Օրբէլեանի եւ Գոնցայի որդու համար, որ Ստեփանոս Օրբէլեանի խորթ եղբօր որդին էր, Տարսայիճի և Մինա խաթունի թոռը, իբրեւ եպիսկոպոս Յոհան Աւրպելու աջակիցը և ապա յաջորդը, դարձեալ Ստեփանոս անունով (աշխարհական անունը Տարսայիճ)։ Նա էլ աւետարանը ստանալիս Գլաձորումն էր և պատրաստւում էր վարդապետական աստիճանի համար(*)։

Այս լուսաբանութիւնից յետոյ պարզ է նաև «Խաչատուր»ի և Կեչառեցու նոյնութիւնը։ Այսպիսով Երևանի № 37/383 Գանձարանի «Խաչատուր» Acrostic-ով գանձերը Կեչառեցունը պիտի համարել վերջնականապէս, հիմք ընդունելով ուսումնասիրութեան համար, եւ աւելացնելով նաեւ ուրիշ գանձարանների յիշատակութիւնները Խաչատուր Կեչառեցու անուամբ (տ. Ցաւել. Գ. 5)։

Կեչառեցու Գանձերը իրենց տեսակի հոգևոր գրականութեան մէջ պատուաւոր տեղ ունին, այնտեղ չեն պակասում անկեղծ, ջերմեռանդ եւ մաքուր զգացմունքով ցոլուած հատուածներ եւ պատկերաւոր արտայայտութիւններ, աւելի աչքի են ընկնում այն մասերը, որոնք ժողովրդական զոյն և գրոշմ են կրում։ Ահա ինչպէս է սղբում Մարիամ իւր որդու մահը խաչի վերայ.

Յս. որդի մաւրս միաւոր,
Աչացս լուս, Ած ահաւոր։
Ա՜յ զեղեցիկ աչեր ծովային,
Այսաւր շիջար ի տեսանելոյ։
Ա՜յ զերազով զլուխ գանգրահեր,
Խոնարհեցար իբր ըզմեռելոյ։
Ա՜յ ոսկեթել մորուս վարդագոյն,
Դու ներկեցար արեամբ յորդանոյ։
Ա՜յ հրաշազործ բերան բերկրալի,
Դու լըռեցեր այժմ ի խաւսելոյ։
Ա՜յ սքանչելի բազուկ զաւրաւոր,
Դադարեցար ի ներգործելոյ։
Ա՜յ պերճագնաց զարշապար յուսոյ,
Խափանեցար ի յերթ եւ եկոյ(*)։

Մարտիրոսներին նուիրուած մի գանձի մէջ երևան է բերում հակոտնեայ մաքերի պատկերաւոր արտայայտութեան մի ձեւ, որ յատուկ է նորա աւագ ժամանակակից Յովհաննէս Գառնեցուն, որի մասին խօսք կը լինի հետևեալ գլխի մէջ.

Զարաչար կիզմամբ ողջակիզեալ մարմնոցդ,
Ըզմեզ փրկեցէք ի կիզանող բոցոյն։
Պատուական զլուխքդ յաւդեալ ի զլուխն Յիսուս,
Ըզմեզ յաւդեցէք ընդ նոյն հիւսմամբ սիրոյ։
Ջարդմամբ անդամոց ձեր ընդ սիրոյ նորին,
Զհոգիս մեր յախտից բժշկեցէք ցաւոյ։
Ուսիւք յաշխարհի հալածականաւքն զձեզ,
Յաշխարհն վերին բարձրացուցէք ըզմեզ(**)։

Բացի Գանձերից, որոնց կցուած են երբեմն եւ տաղեր զուտ կրօնական բովանդակութեամբ՝ եւ եկեղեցում սրբոց տօներին երգուելիք, կեչառեցին ունի և անկախ, աւելի աշխարհիկ բնաւորութեամբ տաղեր, տարաբաղդաբար ոչ այնքան բազմաթիւ, ինչպէս Գանձերն են, գոնէ մեզ յայտնի չեն մեծ թուով։ Նրանք արժանի են յատուկ ուշադրութեան, գրուած ժողովրդական ոգւով և լեզուով, մրցել կարող են ժամանակակից Ֆրիկի հետ զգացմունքի խորութեամբ, անկեղծութեամբ եւ պատկերաւորութեամբ։ Կեչառեցու այդ կարգի բանաստեղծութիւնները, ինչպէս և Ֆրիկինը, որ տարաբաղդաբար իւր ամբողջութեամբ դեռ ևս յայտնի չէ բանասիրութեան, զրչական և խրատական բնաւորութիւն ունին՝ աշխարհի անցաւորութեան մոտիւներով և նման տաղաչափութեամբ(***)։

(*) Տես Х. В. Т. II. ե. II. 216. մեր Potomstwo Tarsaitcha i Minachathuni յօդուածը։

(*) Ձեռ. Էջմ. № 831 նժ. 100. Մեծի Ուրբաթին է Գանձս. Սկս. Խորհուրդ սոսկալի, անիմանալի. Arc. Խաչատուր։ Մէջ բերուած մասը նաև № 3540, 263ա., առաջին մասը ընկած է։

(**) Ձեռ. Էջմ. № 831 նժ. 103ա.։

(***) Ֆրիկի բանաստեղծութիւնների ժողովածուն ձեռագիրների համեմատութեամբ պատրաստել է Տիրայր Արքեպիսկոպոս Տէր Յովհաննիսեան, որ դեռ ևս անտիպ է։